



ԹՄՆԵՐՍԻ ԹՄԾՁՆՆՈՒՄՆԻ ԿՐՄԱՅՍԻ ԱՌՈՒԻ

«ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05, tsarukyan@parliament.am

Հարգելի Սեդա Ղուկասյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ նշեմ, որ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կանոնաարգ սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետում սահմանվող ՀՀ ԱԺ պատգամավորի պարտականություններն իմ կողմից իրականացվում են օրենքին տառին համապատասխան:

Քաղաքացիների և միջազգային, տեղական տարբեր իրավաբանական կարգավիճակ ունեցող կազմակերպությունների հետ հանդիպում-քննարկումները իմ առօրյա աշխատանքի պարտադիր մաս են կազմել ՀՀ Ազգային Ժողովի ոչ միայն 1-րդ գումարման երկու նստաշրջանների ընթացքում, այլև նախկինում իմ ծավալած պատգամավորական գործունեության ողջ ընթացքում: Սակայն պետք է նշեմ, որ լինելով Ծառուկյան խմբակցության քարտուղար՝ իմ կողմից քաղաքացիների ընդունելության թիվը կտրուկ աճել է, քանի որ բնակչության մի ստվար հատված նախընտրում է դիմել առաջին խմբակցություն:

Կոժվարանամ կոնկրետ թիվ նշել քաղաքացիների ընդունելության վերաբերյալ այն գերազանցում է հարյուրը, և, պետք է նշել, որ քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է ոչ միայն Ազգային Ժողովում, այլև Բարգավաճ Հայաստան կուսակցության գրասենյակում, բացի այդ մեզ զանգահարողների ոչ մի հարց անպատասխան չենք թողնում: Առավել հաճախ ստանում եմ փոստային, էլեկտրոնային դիմում-նամակներ, որոնցում քաղաքացին ֆինանսական աջակցություն է պահանջում,

նմանատիպ խնդիրները չեն գտնվում պատգամավորի լիազորության շրջանակում: Եթե դիմումի բովանդակություն հանդիսացող խնդիրը գտնվում է պատգամավորի լիազորությունների շրջանակում, ապա քաղաքացիներին հորդորում ենք իրենց դիմումը, խնդրանքը կամ առաջարկը շարադրել թղթին, որպեսզի իրավական ընթացք տրվի:

Թե ովքեր են դիմել, թույլ տվեք ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկատվությունը չհրապարակել, իսկ իրավաբանական անձանց, հասարակական կազմակերպություններից կարող եմ առանձնացնել իմ և Ծառուկյան խմբակցության իմ գործընկերների բազում հանդիպումներ ՓՄՁ զբաղվող քաղաքացիների, Նաիրիտի աշխատակիցների, Տաքսու վարորդների ասոցիացիայի անդամների հետ: Իմ գործունեությանը լավագույնս կարող եք ծանոթանալ իմ պաշտոնական և/կամ անձնական ֆեյսբուքյան էջից, որտեղ ըստ ժամանակագրության կարող եք ականատես լինեք և Ձեր կողմից պահանջվող լուսանկարներին, և՛ տեսաձայնային տարբերակին և համապատասխան գրառումներին: Այս ամենը համապատասխան կարգով նաև արխիվացվում է , բայցև բաց է հանրության առջև /վերջաբանում տրված են հղումների մի մասը/: Շատ հաճախ քաղաքացիները դիմում են պատգամավորի գործունեության հետ ոչ մի ընդհանրություն չունեցող հարցով, ցավոք, այդ դեպքում լավագույնը այդ քաղաքացիներին խորհրդատվություն տալն է, ճիշտ ուղիները ցույց տալն է, որը ևս պահանջում է կարճատև հետազոտական աշխատանք:

Մեծաթիվ քաղաքացիներ՝ երիտասարդներ, տարեցներ միջին տարիքի քաղաքացիներ դիմում են սոցիալական խնդիրներով, առողջապահական, կրթական, սոցիալական արդարության իրացման և նմանատիպ հարցերով, իսկ ֆինանսական խնդիրները, որոնք գերազանցում են մնացած այլ հարցերի, ինչպես նշեցի, չեն մտնում պատգամավորի լիազորության մեջ:

Մենք ակտիվ համագործակցում ենք հասարակական կազմակերպությունների հետ և կաշկանդված չենք մեր խմբակցության անդամներին և աշխատակազմին ներկայացնել տարբեր միջոցառումներում և նախաձեռնություններում, որոնց ուսումնասիրման և համակարգման աշխատանքը ևս իրականացվում է իմ կողմից: Ցավում եմ, որ Ձեր տված հարցերին թվերը բացարձակ հստակ չեն, որովհետև կարևորում եմ քաղաքացու խնդրի կարևորությունը և ոչ թե նրանց ընդունելության կամ դիմումների թիվը: Դիմումների մի մասը վերահասցեագրվել է կառավարությանը, պետական այլ մարմինների, և

մենք, հանդիսանալով միջնորդ, կարողացել ենք հնարավորինս նպաստել խնդրի լուծմանը:

Խմբակցության անդամ պատգամավորների գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով յուրաքանչյուր հանձնաժողովի նիստից առաջ իրականացնում ենք քննարկում խմբակցությունում, քննարկում օրակարգի հարցերը, կայացնում միասնական որոշում, ներկայացնում մեր առաջարկները և օրենսդրական նախաձեռնությունները: Վեցերորդ գումարման երկու նստաշրջանների ընթացքում իմ գործընկերների հետ միասին հանդես եմ եկել գրեթե մեկ տասնյակ օրենսդրական նախաձեռնություններով, ներկայացրել ենք խմբակցության առաջարկ օրենքի նախագծի փոփոխության վերաբերյալ:

Կից ուղարկում եմ հղումների մի մասը՝

<https://www.youtube.com/watch?v=ZeX5U-r-1zE>

<https://www.youtube.com/watch?v=Xf1Y3OVH-rs>

<https://www.youtube.com/watch?v=IQzpCEgOKhY>

<https://www.youtube.com/watch?v=vJ6agGXwyLU>

<https://www.youtube.com/watch?v=fajOonYPxuI>

<https://www.youtube.com/watch?v=VUN5X--bfrE>

<https://www.youtube.com/watch?v=VUN5X--bfrE>

<https://www.youtube.com/watch?v=n8RDC6kZ89c&t=24s>

<https://www.youtube.com/watch?v=n8RDC6kZ89c&t=24s>

<http://1lur.am/am/archives/303037>

<https://www.facebook.com/enfiajyan>

<https://news.am/rus/news/425111.html>

<https://www.facebook.com/photo.php?fbid=1756806097722893&set=a.260912803978904.63019.100001805597271&type=3&theater>

